

ծելու համար՝ Բիւզանդիոն եկած և հոն հաս-
տատուած կ'երեւի. որովհետեւ իր նամակ-
ները՝ գրուած են Բիւզանդիոնէն: Իր թուա-
քանական մեծ տաղանդը կարող չէր ծածուկ
մնալ, և իշխաններ նախաձեռնք չէին համա-
րիբ՝ իր գիտութեան աշակերտել:

Այսպէս Խաչիկ՝ արքերազգիներու պետը
(ԾՈՎ ԾԵՂՏԵՍՈՎ ԿՆՐԱԸ) — այսինքն իշխանը՝
որուն պարտքն էր ազերսագիրները կայսեր
ներկայացնել, — իր մեկինսանն եղաւ. Ար-
տաւազգի համարողական արունտի վրայ
գրածը՝ առ նա ուղղուած է:

Արտաւազգ աստղաբաշխի կենաց վրայ
ուրիշ ո՛ր և է տեղեկութիւն չունինք: Ակնարկ
մը նետանք, թերին լրացնելու համար, պատ-
մական շրջանին վրայ՝ յորում կ'ապրէր:

Արտաւազգի ժամանակ Պոլսոյ վրայ կ'իշ-
խէր Անդրոնիկոս Բ (1282—1328): Հետե-
ւաբար հայ աստղաբաշխը պէտք է տեսած
ըլլայ Ռիբա կամ Մարիամ հայազգի կայս-
րուհին՝ որ Կիլիկիայէն բերուած էր, և Ան-
դրոնիկոս Բ-ի Միջոյնի որդւոյն հարսնա-
ցած: Արտաւազգ պէտք է տեսած ըլլայ նաև
Կիլիկիոյ Հեթում Բ. վերաբարկի արքայն,
որ իր դստեր պատճառաւ Պոլիս եկած էր,
բայց փոխանակ արքունիք բնակելու՝ Լատի-
նաց վանքին մէջ առանձնացած:


Այդ դարը օտարաբան թուական մ'էր.
Կիլիկիոյ բնակիչները լատինաճալ սկսած
էին, Բիւզանդիոնի Յոյները՝ հելլենաճալ:
Դարու նկարագիրը զուրս կը ցայտեցնէ ու-
րեմն այն հանդամանքը՝ որ երկու Հայեր
(Արտաւազգ ու Խաչիկ) յոյն լեզուով կը
թղթակցին:

Բիւզանդական պետութիւնը կորստած էր
իր բոլոր փառքը. Կալաթայի՝ ձենովացեք
կ'իշխէին, Բերայի՝ վենետիկեցիք, այժման
Ստամբուլի՝ Յոյներ: Այսպէս Բիւզանդիոն
բաժնուած էր երեք քաղաքներու, ուր երեք
տարբեր զգեեր հաստատուած էին: Վենետ-
իկեցիք և ձենովացիք քաղաքին մէջ իրարու
զէ՛մ պատերազմ կը մղէին, և յոյն պետու-
թիւնը անկարող էր անոնց ստոտելու: Ար-
տաքին քաղաքականութիւնը գրազած էր գրլ-
խաւարպէս թուրքերով, որոնք սկսած էին

յտնաջ գալ: Մտաւորական կեանքը՝ ոչ նուազ
արգահատուելի էր. Եւրոպացւոց մերձաորու-
թիւնը, որ ռազմական և վաճառականական
շարժառիթ ունէր, զայն վերականգնելու տեղ
կը խաւարեցնէր: Ահա այս դարուն մէջ փոյ-
լեցաւ Արտաւազգ, Բիւզանդիոնի՝ Անտիա
Շիրակցիին:

Հ. Կ. Տ. ՄԱՆԱԿԵՆՆ

Շարադարիկի



ՔՐԵՈՒԹԻԻԿԻՆ, ՄԸ ՇԻՎԱՐՈՒՎ ԿՐԱՅ

Քաղաքացի (1877, էջ 276) Արտա-
ւազգայ շարադից առաջնորդ վերնագրին տակ,
հետեւեալ հաստակաորր կը հրատարակէր,
առնելով միւր ձեռագրատան Ա. Ոսկեփորե-
կէն, ուր վերնագիրը կը պակտի:

« Թագաւոր մի կար Հայոց, Արտաւազ
անուն. և ունէր որչի մի խելագոր՝ Շիրայր
անուն: Եւ ի մեռանինն Արտաւազայ՝ ոչ հս
զխնալաւորութիւնն Շիրայրայ, զի խելագոր
էր. վասն սրայ և աշխարհս վրայոլեցաւ և
տւերումն լինէր ոչ սակաւ: Եւ յուրս միւսմ
հեծեալ Շիրայր ի ձի, և հս փոզ հորկանել
թէ կամիմ՝ թաղաւորել, և ել զնաց ընտիր
հեծելոք ի դրօսանս: Եւ ելեալ ի վերայ
կամբլի գետոյն վասն յանցանելոյ, և անդէն
շարժեալ զնա այսոյն պղծոյ, անկաւ ի գետն
և կորեաւ: Եւ հեծելագորքն համբաւեցին թէ
աստուածքն Շիրայրայ յախշատկեցին զնա,
և եղին ի Սեւա լեռան՝ որ է Աւազ Մասիս:
Եւ անդ կայ շղթայած, և երկու չուն՝ մին
սպիտակ և միւսն սեւա, կա լիզին զշղթայոն
Շիրայրայ հանապազ և ի տարեւիցն ի մի
մազօն գայ. որ թէ կարի՛ նա հյնէ և զաշ-
խարհս անցուցէ: Վասն որոյ կարգեցին
կախարգքն առասպել զիմօք թէ ի տարւ-
մուտն, ի նաւատարիկ ա, ամենայն գործա-
ւար զիւր գործն զինչ և իցէ կոփէ երեք ան-
գամ, զարբինն, և այլն: Զի կապն Շիրայրայ,
որ ի մազն եկեալ է ի կարիլ, զարձեալ
հաստանայ և ամբանայ, որ ոչ երէն Շիրայրն
և զաշխարհս անցնէ: Այսպիսի առասպել

դիմօք վարէին Հայք, մինչեւ ի սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր, որ խափանեաց զայն։ և կարգեաց ատեն ի մինն նաւասարդի սրբոյն Յովհաննու կարաստեանն և Ամանադղինայ Հայրապետին, զի սուսն և գարչելին խափանեցի, և սուրբ ճշմարտութիւնն հաստատեցի, ի փառս Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն » :

Ահա տասիկ Բ. Արտաւազդի պատմութիւնը, ինչպէս որ կը ներկայացնէ մեզ զայն խորհնացի երգիչներէն ու պատանեհերն առնելով։ Եւ իբրև այսպէս՝ կը հասցնուի ինչ որ արշափ կարեւորութիւն ունի քննութիւնը այն ասարեարութեանց, զոր ունի խորհնացիէն։

Տարբերութիւններէն ամենէն հետաքրքրականն է Շիրաք անուան ներկայութիւնը. սրչափ ուսութիւն ունի, անձնաւորութիւն մըն է, ղուկից մտած է Արտաւազդի առասպելին մէջ։ Ահա տասիկ շարք մը հարցումներ, որոնց կը փորձենք պատասխան տալ։

« Բազմավէպ »-ը, ինչպէս տեսանք, պարզ հրատարակութիւն մը կատարած է, առանց ս և է ծանօթութեամբ մը լուսարանելու։ Հ. Ալիշան Հայապատմի մէջ (էջ 64, մեծագիրը) նոյնը մերտակ տպելով, կը ծանօթարանէ թէ « Քոստի թէ այն անունն ալ խելագարի նշանակութիւն ունեցած ըլլայ, զոր ուսմիւր իբրև զատ անձ մի, Արտաւազգայ սրբեգրի են »։ Նոյն հեղինակը՝ իր Հին հուսոտք Հայոց գրքին մէջ, (էջ 219) կը գրէ « Ալսոնք (շիրաք) ոչ աչաց՝ այլ մտաց կուրացուցիչ դեւք էին, այսինքն խելագարոց, խնթնոց, ինչպէս յիշեցինք Արտաւազգայ համար, սոյն անուամբ խելագարն այլ Շիրաք կոչուի »։ Հ. Տաշեան Չնուիրաց ցուցակին մէջ (էջ 25) հրատարակած է Շիրաքու առասպելը, անհիշով իրենց 7. թիւ Յայնմաւորքէն, որ գրուած է 1439 : Նոյն ցուցակին մէջ (էջ 181) սոյն անունը Ձիւրաք գրուած է, ըստ թիւ 32 ձեռագրին, որ գրչութեան սխալ մըն է պարզապէս։

Հնագոյն մատենագիրը Մայիստորուն է որ

Շիրաք բար կը գործածէ. « Շուայտական շիրաքայն շարս շամանպողեալ շոհանան ի վերայ մեր » : Բայց որովհետեւ այս անունը պատահանց առասպելները կու տային Արտաւազդի, կրնայ ենթադրուիլ որ աւելի խոր հնութիւն ունենայ քան ժԱ կարը՝ յսրում ասրեցու Մագիստրոս։

Սոյն մատենագրին գործածութեանն կը տեսնուի որ Շիրաք յատուկ անուն մը չէ այլ եւս. իսկ վկայութիւն մը վաճառական վարկապետին (գար ժԻԿ), կը ցուցնէ թէ ժողովուրդը զայս իբրև մակիր տուած է Արտաւազդի. « Արտաշէս բարեմիտ էր, և որդի մի էր նորա Արտաւազգ անուն, բախած ի մանկութեան, զոր Շիրաքն կոչէին » : Կեւրևի թէ այն աղբիւրը բնակչեամ է և վիեննայի Միխիմարեանց ձեռագրատան 7 Յայնմաւորքի օրինակը, որ կը գրէ՝ « Քաղաւորն Հայոց բարեմիտ եղեալ յազգի անպ իւրում, շինութիւն և խաղաղութիւն աշխարհէ. ամենայն արեք յաւելեալ և սիրելի ամենեցան և հոչակաւոր ընայ : Որդի մի էր նորա, Արտաւազգ անուն, բախած ի մանկութեան, զոր Շիրաքն կոչեն » : Յետոյ կը շարունակէ Արտաւազգ անուան վրայ պատել տոսպելները, համաձայն խորհնացուց։

Այս բոլորին գործածութեանն կը տեսնուի որ Շիրաքն և Արտաւազգ նոյն անունն են Շիրաք արիչ անուն մըն է Արտաւազգի, կամ մակիրը մը՝ զոր կու տայ իրեն ժողովրդական առասպելը։ Անոր համար անծանօթ է մեր հոս հրատարակածին աղբիւրը որ Շիրաք ասրեք անձնաւորութիւն մը կը համարի, որդի Արտաւազգի, եթէ չուզենք քմաշունջ փոփոխութիւն մը համարել անոր որ այս ժողովրդական առասպելը գրի տուաւ։

Ինչ է շիրաքը որ եկեր Արտաւազգի անունն հետ միացիք է։ Վերը՝ Հ. Ալիշանի դիտողութեան մէջ՝ կ'ըսուէր որ « Քոստի թէ այս անունն այլ խելագարի նշանակութիւն ունեցած ըլլայ » : Գրեգոր Մագիստրոսի ու միւսերուն գործածութիւններն ալ կ'երևին զայն հաստատելու. բայց հայերէնի մէջ այս

1. Հմմտ. Հայապատմում, էջ 64, մեծագիրը։

2. Հմմտ. Հ. Տաշեան, Յուսոտք, էջ 25։

բար անձանօթ է. մեր լեզուով անկարելի է գտնիկայ սոսոգաբաննել: Ըստ այսմ օտար լեզուէ փոխառութիւն համարելով միայն Արարելնի մէջ կը գտնենք շարք ձայնք, որ բուն կը նշանակէ անտակ, մոռցիկ: Երկար ձեւը ասիկց կրնայ յառաջ եկած ըլլալ ժողովրդեան բերնին մէջ, բոնու համար Արատուար մոռցիկ, ինչպէս իտալացիք կ'ընեն իտալեան մոռցիկ:

Եթէ ճիշդ է այս լուսարանութիւնը՝ այն ատեն Երկարու առասպելը առ առաւելն մինչև է. սոր կարելի է բարձրացնել, ուր կը սկսին Արարացիք մեր լեզուին վրայ զգացնել իրենց ազդեցութիւնը, ինչպէս մեր ուստրոն վրայ իրենց օրէնքներունը: Բայց եթէ ինչպէս հին է Արատուարի առասպելները՝ նոյնպէս հին համարինք է իր Երկար յորջորջումը, տարբեր մեկնութեան մը կը յանգինք, որ մեր պատմութեան կէտ մըն ալ կը լուստարէ:

Այն ժամանակը՝ յորում Խորենացի՝ Բ. Արատեանի թագաւորութիւնը կը գնէ՝, որու որդին էր Արատուար - Երկարը, հոռմայեցի պատմիչները մերձաւորապէս Տիրիթը (= Տրդատէս) կը գնեն, որուն հաւանօրէն որդին էր և ոչ թոռը, Ալիսայար անուն, կ'ըսէ Գաթրբեանն՝ որ րոտ հոռմայեցի պատմագրաց Գովհարանոսի ատեն (81-96 Յետ. Գր.) Հայոց վրայ կը թագաւորէ: Իսկ քննութիւնները շատ որոշ ապացուցեք են՝ որ Արատէս Բ. է նոյն իսկ հոռմայեցի պատմիչներուն Տրդատէս կոչածը (Հմմտ. Գաթրբեան, հտ. Բ. էջ 594)¹: Բնական հեռուանքն է՝ որ մտածուի նոյնացնել նաև Արատուար - Ալիսայար անձնուորութիւնն:

ըր, և կարելի է կարծել թէ ժողովրդական առասպելին պահած Երկար անունը կէտն է՝ ուր կու գան երկուքը միանալ: Տեսանք թէ Երկար ինչ աղերս ունի Բ. Արատուարի հետ, իսկ Ալիսայար անունը Երկար ձեւով մնացած կ'երեւի ժողովրդեան բերնին մէջ, սակէ զատ հայերէնի ոչ մէկ ձայնարանական օրէնք չի հակառակիր որ Ալիսայար Երկար եղած ըլլայ: Այս պարկական անունն առաջին գիրը Ա՝ ընկած է, ինչպէս Հրահատ անունն մէջ, զոր յայները 'Αφραάτης կը գրեն. Յաջորդ չի պարկերէնի մէջ իւր հակառակ կարգն ունին, ինչպէս մնացեք է Հոռմայեցի պատմիչներուն ըսով, որ այս անունը էքրէպար կը գրեն. իսկ իւր հին պարկական ձայնարանները ուղորարար չ կը փոխուի ինչպէս նոր պարկերէնի՝ նոյնպէս հայերէնի մէջ:

Եթէ գիրին է Երկարը Ալիսայարի հետ նոյնացնել՝ կը մնայ հիմայ տեսնել թէ որչափ համաձայն են Խորենացի և Հոռմայեցի պատմիչները:

Առասպելները դուրս հանելով՝ Խորեն. Բ. 61, Արատուարի համար կը գրէ « Յետ Արատալիսի թագաւորէ Արատուար որդի նորա ... որ յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ, ահցեալ զկամըջան Արատալա թագաւոր՝ որսու կրնու և իշովայրիս գաւկամք Գինայ, ազովկաւ իմն ի ցնորից իւլպարանաց, ընդ վայր յածելով երկաւրան, անկանի ի խոր իմն մեծ, և խորասոյց լիալ անհետի »: Ալիսայարի վրայ ալ աւելի բան մը չաւանդուիր. թագաւորելն քիչ տարի վերջ Խորսով Պարթեւաց թագաւոր կը հալածել զինք Հայաստանէն՝ տե-

1. Իշնիկ Ե. գարու առաջին կիսուն կը գրէր « մուրթութիւնն զհեաց խորեաց զգիւղապալատ Հայոց, եթէ զպէ Արատուար անուն արգիւհալ իրէ զհեաց, որ որջով կ'ընանի կայ, և նա ելանիւց և և ունիւց զաշխարհ, և ի անտի յոյս կապուլ կան անհատար » Հմմտ. Իշնիկ Աղանդոց, տպ. Վինետիկ, էջ 105:

2. Յետ Գր. 80-115 կը հարցնէ Գաթրբեան, Տիեզ. Պատմ. Ըս. Բ. էջ 63: — Յ. Անդ. էջ 172:

3. Ըստ այսմ հաւանական կ'երեւի այս Տիրիթ-Արատալիս վրայ առնել այն առակը զոր Ազարթ. (էջ 103, տպ. Վինետ. 1862) քրիստոնեայ գարնու Տրդատին

վրայ կը սիշատակէ Իրեքէ զեգն Տրդատ՝ որ սիգալսն աներեաց գրուինս գետոց, և քանկեցոց իսկ ի սիգալ իւրում շարմանս ծագոց. որովհետև Մեծն Տրդատի վարքն մէջ ոչ թեմարի բազիւտ և ոչ ծոգիք ցամքեցնելու անհարկութիւններ կան, մինչ Տիրիթ = Արատալիս համար աւանդուած է թէ « Ու ի ծոգակա աշխարհիս նաւագնացութիւնք, և ոչ գործիք ձկանց և որսոց ... Եւ այս անմայն յորինի յաւսր Արատալիս »: Հմմտ. Խորեն. Բ. 59: — Բայց ստոր վրայք յաջորդ Ամասթուով քիչ մ'աւելի ընդարձակ պիտի խօսենք:

դը զնեյալ Պարթմամսոր՝ որ իր երբորբւ-
 զին էր: Այս զէպքը ասիթ կ'ըլլայ որ Հաւ-
 մայեցիք և Պարթեք իրարու մէջ պատե-
 բազմ՝ բանան, բայց Աշխարհար մէջտեղէն
 կ'անհետանայ այլ եւս: Ազգային աւանդու-
 թիւնը՝ ինչ որ կ'ըսէ Արտաւազի վրայ, Աշ-
 խազարի հետ միացնելու համար յանգուզն
 կարծիք մը միայն կարելի է յայտնել թէ
 Պարթմամսորի կուսակցութենէն հաշվածուած
 փախչելու աստն, Արտաշատի հոշակաւոր
 կամարընէն Երասխ գետն ընկեր է: Դիտելու
 է որ մինչ Խորհնայի կ'ըսէ « անցեալ զկա-

մրջան Արտաշատու՝ որսւլ կինճս և իշա-
 վայրիս զսկամբք Գինայ », Ծիղարու ա-
 ռասպկը կը զրէ « Եւ երեալ ի վերայ կամրջի
 գետոյն վասն յանցանելոյ, և արդէն շար-
 ժեալ զնա այսոյն պղծոյ՝ անկաւ ի գետն և
 կարեա »:

Հուսկ՝ եթէ՛ յիշարբ արար շարբ բառն
 յառաջ եկած համարինք, եթէ՛ Աշխազարի
 անունն, յամենայն զկար գեւ մը չէ, ինչ-
 պէս կը զրէ « Հին Հաւասք Հայոց »:

Հ. Կ. ԱՅՐԻՆԻՆԵ



ԵՂԵՇԵՒ ՊԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ՆՈՐԱԳԻՒՏ ՀԱՏԱԿՈՏՈՐՆԵՐ



(Նախընթացն տես էջ 7)

Ա. ԹՈՒՎԹ, էջ Դ, ՍԻՒՆ Խ

ՏՊ. էջ 183

..... եթէ զոր Հա
 չիմանան. և իբր
 և ոչ գտանի արասքին թշ
 նամի, ընդ անձինս իւրե
 անց մարտ եզեալ կուսին:
 Ի զկոյ իոկ ելանէ բան մարդ
 արէին ի վերայ նոցա, այր
 աս քաղցի իւրոյ ասէ շրջ
 հոցի և կերիցէ զկէս անձ
 ին իւրոյ: Նմին և աէրն
 իերբ ասէ, ամենայն
 սուն և թագաւորութիւն որ
 յանձն իւր բաժանի, ոչ կայ
 սուն

Արդ զի
 ցիս. զի այրիս, զի բորբ
 որիս, զի շիջանիս, զի
 կոչես ի խորհուրդս զայ
 նասիկ սրոց զողիս ձեր

... և կիմ Հար-
 կաննն՝ չիմանան. և իբր-
 և ոչ գտանի արասքին թրշ-
 նամի, ընդ անձինս իւրեանց
 մարտ եզեալ կուսին:
 Ի զկոյ իոկ ելանէ բան մար-
 դարէին ի վերայ նոցա. « Այր, ասէ,
 աս քաղցի իւրում շրջես-
 ցի և կերիցէ զկէս անձին
 իւրոյ »: Նման զմին և Տէրն
 ինքնին ասէ. « Ամենայն
 սուն և թագաւորութիւն՝ որ
 յանձն իւր բաժանի, ոչ կարէ
 կալ Հասասասուն »:

Արդ զի՞ կածիս, զի՞ մը-
 ցիս, զի՞ այրիս, զի՞ բոր-
 բորիս, զի՞ շիջանիս, զի՞
 կոչես ի խորհուրդս զայ-
 նասիկ, սրոց զողիս ձեր